## Ս. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ

### ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

Էջմիածին, 6 Ապրիլ 1953

Նորին Գերապատուութիւն
ԵՂԻՇԷ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԷՐՏԷՐԵԱՆ
Տեղապահ Հայոց Երուսաղէմի

Մեր Փրկչին հրաշալի Յարութեան առիթով սրտագին շնորհաւորութիւններ Ձեզի, Ս. Յակոբեանց Միաբանութեան, եւ Յորդանանի մեր հաւատացեալ հօտին։ Կ'օրհնենք զՁեզ բոլորդ հայրաբար, Յարուցեալ Փրկչի սիրոյն եւ խաղաղութեանը մէջ, ամէն։

ԳԷՈՐԳ Զ.
Ծայրագոյն Պատրիարք
եւ Կաթողիկոս Ամենայն Հայոց

Երուսաղէմ, 2 Ապրիլ 1953

Նորին Սուրբ Օծութիւն
ԳԷՈՐԳ Զ.
Կաթողիկոս Ամենայն Հայոց
Էջմիածին

Յանուն Ս. Յակոբեանց Միաբանութեան եւ Յորդանանի մերազն ժողովուրդին, կը ներկայացնենք Ձեզ Ս. Զատկուայ շնորհաւորութիւններ, մաղթելով Ձերդ Սրբութեան երկար ու երջանիկ կեանք ու յաջողութիւն Եկեղեցւոյ, Հայրենիքին եւ սիրեցեալ ժողովուրդին։

ԵՂԻՇԷ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԷՐՏԷՐԵԱՆ
Տեղապահ Առաք. Ս. Աթոռոյ

*Գեր. Տեղապահ Սրբազանը հետեւեալ հեռագիրը ղրկած է Քէնթըրպըրիի Բարձրաշնորհ Արքեպիսկոպոսին, փոխանցուելու համար Էլիզաբէթ Բ. Թագուհիին և կայսերական ընտանիքին, Անգլիոյ Մայր Թագուհւոյն մահուան առթիւ։*

Երուսաղէմ, 25 Մարտ 1953

Նորին Գերաշնորհութիւն
Քենթըրպըրիի Արքեպիսկոպոս
Լոնտոն

Կը խնդրենք որ մասնակցիք Նորին Արքայական Բարձրութեան, մեր խոր ցաւակցութիւնները իր ունեցած կորուստին համար, յանձին իր մեծ մօր, Մարի Թագուհւոյն մահուան։

Տնօրինական Սրբասեղանց մէջ կը մատուցանենք մեր աղօթքները Անոր հոգւոյն ի հանգիստ։

ԵՂԻՇԷ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԷՐՏԷՐԵԱՆ
Պատր. Տեղապահ Առաք. Աթոռոյն
Ս. Երուսաղէմի

Երուսաղէմ, 2 Ապրիլ 1953

Նորին Վսեմութիւն
ԳԱԼՈՒՍՏ ՊԷՅ ԿԻՒԼՊԷՆԿԵԱՆ
Լիզպոն

Ս. Յակոբեանց Միաբանութիւնը եւ Երուսաղէմի մեր երախտապարտ համայնքը կը ներկայացնենք Ձերդ Վսեմութեան Ս. Զատկուայ առթիւ մեր սրտագին մաղթանքները երկար եւ երջանիկ կեանքի։

ԵՂԻՇԷ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԷՐՏԷՐԵԱՆ
Տեղապահ Առաք. Ս. Աթոռոյ

Լիզպոն, 3 Ապրիլ 1953

Գերաշնորհ
Տ. ԵՂԻՇԷ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԷՐՏԷՐԵԱՆ
Տեղապահ Առաք. Ս. Աթոռոյ
Երուսաղէմ

Ջերմագին շնորհակալութիւններս Ձերդ Գերաշնորհութեան եւ Ս. Յակոբեանց Միաբանութեան սրտագին մաղթանքներուն համար զորս ի խորոց սրտի կը փոխադարձեմ։

Գ. ԿԻՒԼՊԷՆԿԵԱՆ

### ԵԿԵՂԵՑԱԿԱՆՔ-ԲԵՄԱԿԱՆՔ

● *Կիր. 1 Մարտ. —* Անառակին: *Ի Ս. Հրեշտակապետ Ս. Պատարագը մատոյց՝ Հոգ. Տ. Զաւէն Արղ. Չինչինեան։ Քարոզեց Գեր. Տ. Նորայր Ս. Եպս. Պողարեան, մեկնաբանելով Անառակի աւետարանական առակը։*

● *Կիր. 8 Մարտ. —* Տնտեսին: *Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր։ Ժամարարն էր Հոգ. Տ. Կիւրեղ Արղ. Գաբիկեան։ Քարոզեց Հոգ. Տ. Գարեգին Վրդ. Վրթանէսեան, մեկնաբանելով Տնտեսի աւետարանական առակը, բնաբան ու-*

digitised by A.R.A.R.@

նենալով «Տուր զհամար տնտեսութեան քո, զի ոչ ևս կարես լինել տնտես» (Ղուկ. ԺԶ. 2)։ Ցոյց տուաւ տնտեսութեան կարևորութիւնը Քրիստոնէութեան մէջ, իմաստութեամբ կառավարելու համար մեզի յանձնուած գործերը։ Տնտեսը գիտցաւ իր ամբողջ հնարամտութիւնը գործածել նախ իր տիրոջ և անոր պարտապաններուն և ապա իր անձին շահերը ապահովելով։ Որքան լաւ և որքան արդիւնաւոր և շահաւէտ պիտի ըլլար, եթէ մարդիկ նոյն խելքը, նոյն ճարտարութիւնը գործածելու ըլլային, իրենց հոգևոր կեանքին մէջ նոյն բարիքները ձեռք ձգելու համար։ Տնտեսին առակը, Աւետարանին խորիմաց առակներէն մին է. անոր ցոյց տուած դասը որքան գործնական, նոյնքան խորհրդաւոր է ինքնին։

Ս. Պատարագի ընթացքին, Ս. Թարգմանչաց վարժարանի Սկաուտական և Արծուիկային խումբերը ստացան Ս. Հաղորդութիւն։

● Եր. 14 Մարտ. — Ս. Քառասուն մանկանցն Սեբաստիոյ։ Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր։ Ժամարարն էր Հոգ. Տ. Զաւէն Աբղ. Չինչինեան։

— Կ. վ. ժամը 2.30ին, Գեր. Տեղապահ Ս. Հայրը «Հրաշափառ»ով մուտք գործեց Ս. Յարութեան Տաճար, ու Ս. Գերեզմանին վրայ կատարելէ ետք իր ուխտը, իջաւ Գիւտ Խաչի այրը. հոն ևս կրկնուելէ ետք ուխտի արարողութիւնը, թափորը բարձրացաւ հայապատկան Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցին, ուր պաշտուեցան երեկոյեան ժամերգութիւնն ու կիրակմուտքը, ինչպէս նաև վաղուան նախատօնը, նախագահութեամբ Նորին Գերապատուութիւն Պատր. Տեղապահ Սրբազանին։ Արարողութեանց աւարտին, Տեղապահ Սրբազանը ի գլուխ Միաբանութեան, վերադարձաւ Մայրավանք։ Ապա կատարուեցաւ Տնօրինական Սրբատեղեաց այցելութեան հանդիսաւոր թափորը, մասնակցութեամբ Հոգ. Վարդապետաց, Բար. Սարկաւագաց և Ժառ. Վարժ.ի բովանդակ ուսանողութեան։

● Կիր. 15 Մարտ. — Դաստուրին։ Առաւօտեան ժամը 5.30ին, Գեր. Տ. Սուրէն Ս. Եպս.ի գլխաւորութեամբ, Միաբանութենէն մաս մը մեկնեցաւ Ս. Յարութեան Տաճար։ Գողգոթայի և Գիւտ Խաչի այրի ուխտերէն ետք, Ս. Լուսաւորիչ Եկեղեցւոյն մէջ, Սուրէն Սրբազանի նախագահութեամբ, պաշտուեցաւ առաւօտեան ժամերգութիւնը, որուն աւարտին, Գեր. Տեղապահ Ս. Հայրը իր շքախումբով մուտք գործեց Տաճարէն ներս ու կարճ դադարէ մը ետք մատոյց օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը Քրիստոսի Ս. Գերեզմանին վրայ. իրեն կը սպասարկէին Հոգ. Տ. Տ. Վարուժան և Օշական Աբեղաները։ Յաւարտ Ս. Պատարագի, Նորին Գերապատուութիւնը նախագահեց օրուան մեծահանդէս երրագարձ թափորին Ս. Գերեզմանին շուրջ և կատարելէ ետք Պատանատեղւոյն ու Ս. Գերեզմանի դրան կարգերը, փակեց սոյն փառայեղ հանդիսութիւնը Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյն մէջ։ Զկնի պաշտամանց, Տեղապահ Սրբազանը ի գլուխ Միաբանութեան, ինչպէս նաև մեր զոյգ վարժարաններուն՝ բովանդակ աշակերտութիւնն ու ներկաներու հոծ բազմութիւնը, շքերթով վերադարձան Մայրավանք, երբ գրեթէ կէսօր էր։

● Ուր. 20 Մարտ. — Կ. վ. Ս. Յակոբեանց Մայր Տաճարին մէջ պաշտուեցաւ Ս. Գր. Լուսաւորչի հանդիսաւոր նախատօնը, որուն կը նախագահէր Գեր. Տ. Սուրէն Ս. Եպս. Քէմհաճեան։

● Շբ. 21 Մարտ. — Ս. Գր. Լուսաւորիչ (Մուտն ի վիրապ)։ Յետ առաւօտեան ժամերգութեան, ձեռամբ Գեր. Տ. Սուրէն Եպս. Քէմհաճեանի, Ս. Գր. Լուսաւորչի մասունքը թափորով իր հանգստարանէն փոխադրուեցաւ Աւագ Խորան, ուրկէ հանդիսապետ Սրբազանը օրհնեց ներկայ հաւատացեալ ժողովուրդը։ Ապա մատուցուեցաւ օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը, Մայր Տաճարի Ս. Ստեփաննոս մատրան, Ս. Գր. Լուսաւորչի սեղանին վրայ։ Ժամարարն էր Հոգ. Տ. Անուշաւան Աբղ. Զզջանեան։

● Կիր. 22 Մարտ. — Գալստեան։ Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր։ Ժամարարն էր Հոգ. Տ. Սերովբէ Վրդ. Մանուկեան։

Վաղեմի սովորութեան համաձայն, Մեծ պահոց Գալստեան Կիրակիին, Ս. Յակոբեանց Միաբանութիւնը Ձիթենեաց լերան վրայ կը կատարէ Համբարձման տօնի արարողութիւններն ու պաշտամունքները։ Այս տարի, մթնոլորտային աննպաստ պայմաններու բերումով, կարելի չեղաւ կատարել Սրբատեղեաց իրաւակարգին մէջ բացառիկ տեղ մը բռնող այս պաշտամունքը իր ճիշդ ժամանակին և յետաձգուեցաւ չորս օր։

● Բշ. 23 Մարտ. — Յետ երեկոյեան ժամերգութեան, Ս. Յակոբեանց Մայր Տաճարին մէջ, Հոգ. Տ. Սերովբէ Վրդ. Մանուկեան, Ծայրագոյն Վարդապետութեան աստիճան ստացաւ Գեր. Տ. Ռուբէն Արքեպս. Մանասեանէ։

● Դշ. 25 Մարտ. — Կ. վ. ժամը 2.30ին, Հոգ. Տ. Պարգև Վրդ. Վրթանէսեանի գլխաւորութեամբ, Միաբանութենէն մաս մը, ինքնաշարժերով Համբարձման լեռ բարձրանալով, կատարեցին երեկոյեան ժամերգութիւնն ու նախատօնը մեր վրանամատուռին տակ։ Գիշերասկիզբին կատարուեցան հանդիսաւոր «Եկեսցէ» և «Հսկումն», որոնց յաջորդեցին առաւօտեան ժամերգութիւնն ու Ս. Պատարագը՝ զոր մատոյց, ըստ ընկալեալ սովորութեան, Ս. Աստուածածնայ Տաճարի, Ս. Փրկչի Վանուց, ինչպէս նաև Համբարձման Սրբավայրի տեսուչ՝ Հոգ. Տ. Անուշաւան Աբեղայ Զզջանեան։ Կէսգիշերին, Միաբանութիւնը գոհունակութեամբ վերադարձաւ Մայրավանք։

● Եշ. 26 Մարտ. — Կ. ա. ժամը 8ին, Գեր. Տ. Սուրէն Ս. Եպս. Քէմհաճեան ի գլուխ վարդապետ հարց, «Հրաշափառ»ով մուտք գործեց Համբարձման Սրբատեղին, ուր մեր վրանամատուռին տակ մատուցուեցաւ հանդիսաւոր Ս. Պատարագ։ Պատարագեց Հոգ. Տ. Պարգև Վրդ. Վրթանէսեան, եպիսկոպոսական խոյր ի գլուխ։ Արարողութեանց աւարտին Միաբանութիւնը վերադարձաւ Մայրավանք։ Այս առթիւ կ'արժէ յիշել թէ Մեծ պահոց մէջ Համբարձման Սրբատեղւոյն

digitised by A.R.A.R.@

վրայ պաշտամունք կատարելու այս իրաւունքը առանձնաշնորհումն է միայն Երուսաղէմի Հայոց Պատրիարքութեան։ Պարագայ մը որ հպարտանքով պիտի լեցնէր իւրաքանչիւր հայու սիրտ։ Այս հանդիսութիւնները նախապէս կը կատարուէին Տնօրէնի Կիրակիին, սակայն վերջերս անոնք կը կատարուին Գալստեան Կիրակիին, տրուած ըլլալով որ ուխտաւորութիւնը քաղաքս կը ժամանէ Մեծ պահոց վերջին շրջանին։

● Շբ. 28 Մարտ. — Յիշատակ յարութեան Ղազարու: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գըլխադիր։ Ժամարարն էր Հոգ. Տ. Կիւրեղ Աբեղայ Գաբիկեան։ Ս. Թ. Վարժարանի ամբողջ աշակերտութիւնը, ինչպէս նաև օտար վարժարաններու հայ ուսանողներ ստացան Ս. Հաղորդութիւն։ Ս. Թարգմանչաց վարժարանի տեսչութիւնը, մասնաւոր շրջաբերականով մը, օտար վարժարաններու երկսեռ հայ ուսանողներուն յիշեցուցած էր կրօնական կարևոր այս պարտականութիւնը, ու անոնք միահամուռ, մօտ 150 աշակերտ ընդառաջած էին իրենց տրուած կոչին։

Մայր Տաճարը հագած էր տօնական օրերու յատուկ իր շքեղ հանդերձանքը։

— Կէսօրէ վերջ ժամը 2ին, Մայրավանքի մեծ զանգը կը յայտարարէր բացումը Աւագ Շաբթուան հանդիսութեանց։ Ժամը 2.45ին, Տեղապահ Սրբազան Հայրը ի գլուխ Միաբան հարց «Հրաշափառ»ի կարգով մուտք գործեց Ս. Յարութեան Տաճար, ու Ս. Գերեզմանին վրայ կատարելէ ետք իր ուխտը, բարձրացաւ Բ. Գողգոթայի հայապատկան վերնայարկ մատուռը, ուր նախագահեց երեկոյեան ժամերգութեան ու Ծաղկազարդի հանդիսաւոր նախատօնին ու պաշտօնական թափօրով վերադարձաւ Մայրավանք։

● Կիր. 29 Մարտ. — Ծաղկազարդ: Առաւօտեան ժամը 6ին, Գեր. Տ. Սուրէն Սրբազանի նախագահութեամբ, վարդապետ հայրեր մուտք գործեցին Ս. Յարութեան Տաճար։ Գողգոթայի ուխտէն ետք, մեր վերնատան մէջ պաշտուեցաւ առաւօտեան ժամերգութիւնն ու կարճ դադարէ մը ետք մատուցուեցաւ Ս. Պատարագը։ Ժամարարն էր Հոգ. Տ. Կիւրեղ Աբղ. Գաբիկեան։ Ապա Գեր. Տեղապահ Սրբազան Հայրը ամպհովանիի տակ նախագահեց օրուան մեծահանդէս թափօրին (որուն ընթացքին կատարուեցաւ նաև «Անդաստան») Քրիստոսի Ս. Գերեզմանին և Պատանատեղւոյն շուրջ։ Թափօրականք ի ձեռին ունէին ձիթենեաց և արմաւենեաց ոստեր։ Մեր թափօրին կը հետևէին Ղպտիք և Ասորիք։ Կատարելէ ետք Ս. Գերեզմանի դրան կարգը, թափօրը աւարտեցաւ Բ. Գողգոթայի մատրան մէջ։ Ժամը 12.30ին Միաբանութիւնը, ձիթենեաց ու արմաւենեաց ոստեր ի ձեռին շքերթով վերադարձաւ Մայրավանք ու շարականի երգեցողութեամբ բարձրացաւ Պատրիարքարան, ուր Գեր. Տեղապահ Սրբազանը «Պահպանիչ»ով օրհնեց և արձակեց հաւատացեալ և ուխտաւոր ժողովուրդը։

— Կէսօրէ վերջ եւս, Ս. Յակոբեանց Մայր Տաճարին մէջ կատարուեցաւ մեծահանդէս «Անդաստան», նախագահութեամբ Գեր. Տ. Սուրէն Ս. Եպս. Քէմհաճեանի, որուն յաջորդեցին երեկոյեան հանդիսաւոր ժամերգութիւնն ու «Դռնբացէք»ի տպաւորիչ ու խորհրդաւոր արարողութիւնը, հանդիսապետութեամբ Տեղապահ Սրբազանին, որուն ընթացքին, Հոգ. Տ. Յակոբ Վրդ. Վարդանեան Աւագ Խորանի բեմէն կարդաց վարագոյրներու բացման մասնակցող բարեկրօն ուխտաւորաց ցանկը ու քարոզով մը շեշտեց Ազունիէյի Թոքախտաբուժարանին կատարած փրկարար դերը մեր իրականութեան մէջ, իբրև անզուգական բուժարանը Միջին Արևելքի, ու քաջալերեց բարեգործական զգացումները։ Սրտագրաւ էր պահը երբ յետ երկարատև ու հեգեզմայլ շարականներու, Տաճարին վարագոյրները կը բացուէին, ի յայտ բերելով Աւագ Խորանը իր ամենաշքեղ զարդարանքներովը կերկնապէս գեղեցկացած, մինչ Տաճարը լեցնող ծովածաւալ բազմութեան մէկ ստուար մասը սիրով ու հայու վայել զգացումներով կը ձգէր իր այրիի լումաները, Տաճարի երկու դռներու մուտքին դրուած պնակներուն մէջ, յատկացուելու համար Ազունիէյի Հայ Բուժարանին։

● Գշ. 31 Մարտ. — Աւագ Երեքշաբթի (Յիշատակ տասն կուսանաց): Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Յարութեան Տաճարի գաւթի Ս. Յովհաննէս Աւետարանչի մատրան մէջ։ Ժամարարն էր Հոգ. Տ. Պարգև Վրդ. Վրթանէսեան։ Յաւարտ Ս. Պատարագի, Տնօրինական Սրբավայրերու մէջ, յատկապէս ուխտաւոր հաւատացեալներու համար կատարուեցաւ հանդիսաւոր թափօր։ Թափօրապետն էր Հոգ. Տ. Միւռոն Վրդ. Կրճիկեան, որ Սրբավայրերուն մէջ տուաւ բացատրական քարոզներ։

● Եշ. 2 Ապրիլ. — Աւագ Հինգշաբթի (Յիշատակ Ընթրեաց Տեառն): Առաւօտուն, Ս. Յակոբեանց Մայր Տաճարին մէջ, Գեր. Տ. Սուրէն Եպս. նախագահեց «Ապաշխարողաց Կարգ»ին։ Մէկ ժամ տևող դադարէ մը ետք կատարուեցաւ միջօրէի ժամերգութիւն, որուն յաջորդեց օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը որ տևեց մինչև կէսօր։ Ժամարարն էր Գեր. Տ. Սուրէն Ս. Եպս. Քէմհաճեան։ Բազմաթիւ հաւատացեալներ և բարեկրօն ուխտաւորներ, ինչպէս նաև Ժառ. Վարժարանի բովանդակ աշակերտութիւնը ընդունեցին Ս. Հաղորդութիւն։

— Կ. վ. ժամը 2.30ին, Ս. Յակոբեանց Մայր Տաճարին մէջ, Գեր. Տեղապահ Ս. Հօր նախագահութեամբ կատարուեցաւ «Ոտնլուայ»ի տպաւորիչ Կարգը, ի ներկայութեան ժողովուրդի հոծ բազմութեան ինչպէս նաև օտար բարձրաստիճան անձնաւորութիւններու։ Լուացման արարողութենէն ետք, ըստ սովորութեան, Անկլիքան Եպս.ը եւս կարդաց Անգլիերէն լեզուով Ս. Աւետարան։

— Իրիկուան ժամը 5ին, փոքր թափօր մը, գլխաւորութեամբ Հոգ. Տ. Միւռոն Վրդ. Կրճիկեանի, այցելեց Քրիստոսի Ա. Բանտը (Ս. Հրեշտակապետաց Եկեղեցին։ Չարչարանաց Խորանին առջև կատարուած Աւետարանի ընթերցումէն ետք, թափօրը յառաջացաւ դէպի Ս. Ծառ, ուր ձաղկուեցաւ մեր Տէրը։ Հոն եւս Ս. Աւետարանի

digitised by A.R.A.R.@

ընթերցումէն ետք, Հոգ. Տ. Կիւրեղ Աբեղայ Գարիկեան քարոզեց ու տուաւ պատմականը Ս. Հրեշտակապետաց վանուց. և ըսաւ. «Սրբավայրը որուն այցելեցինք կը ներկայացնէ քանի մը արժէքներ։ Մէկը անոնցմէ իր հին հանգամանքն է. Ը. դարու գրող մը կը յիշատակէ այս վանքը իբրև Ս. Հրեշտակապետաց հայապատկան վանք մը։ Ուրիշ արժէք մը՝ այս վանքին, Յիսուսի վերջին գիշերուան, Անոր ձաղկումին և չարչարանաց յիշատակին հետ կապուած ըլլալն է։ Հոս էր որ Քրիստոս դատուեցաւ։ Այս Սրբավայրը Աննա Քահանայապետին տունն էր։ Հրեաները դատեցին զՅիսուս քահանայապետին առջև վասնզի Անիկա կրօնական յանցանք մը գործած ըլլալուն համար կ'ամբաստանուէր։ Քրիստոս դատուելու ատեն, քահանայապետին ծառաներէն մին ապտակեց զԱյն։ Ըստ աւանդութեան; Հրեշտակները իրենց երեսները ծածկեցին իրենց ամօթէն, զի մարդը կ'ապտակէր իր Աստուածը: Ուստի՝ այս վանքին անունը մնաց Ս. Հրեշտակապետաց վանք։ Քիչ մը անդին գտնուող մառանին մէջ զԱյն բանտարկեցին. ու տակէ չգոհանալով բերին և կապեցին այս ծառին։

Կայիափա Քահանայապետին քով վերջնականապէս մահուան դատապարտուելէ ետք, իր ամենասիրելի աշակերտը զինք երիցս ուրացաւ։

Սիրելի և ուխտաւոր ժողովուրդ. Պետրոս ունէր իր տկարութիւնը, ինչպէս մենք բոլորս ալ ունինք. մենք երբեմն ոչ միայն կ'ուրանանք մեր Տէրը, այլ նաև կը խաչենք զԱյն։ Մեր պարտաւորութիւններուն մէջ թերանալով, տեսակ մը ուրացողներ կը ներկայանանք մեր Տիրոջ։ Դուք բոլորդ ալ որ եկաք, այցելեցիք մեր Սրբավայրերը, հաղորդուեցաք այն հոգևոր հարըստութեան որ մեր ազգինն է. Թող այս հոգևոր խանդը մխիթարէ զձեզ ոչ միայն այստեղ, այլ կենդանի աղբիւր մը ըլլայ ձեր հոգիներուն մէջ. տարէք զայն ձեր եղբայրներուն և քոյրերուն, տարէք այս մեծ իրողութիւնը, քրիստոնէական այս վսեմ ճշմարտութիւնը զորս առիք այս Սրբավայրերէն։ Վսեմ ճշմարտութիւններու հետևելով է որ պիտի արժևորուինք, և բարձրանանք մեր հոգևոր վերազարթման։ Մարդկօրէն գործուած մեր թերութիւններուն քով ի վեր, հոգևոր այս խանդը պիտի վերադրոշմէ մեր հոգիներուն մէջ Աստուծոյ պատկերը, զորս մեր թերի արարքներով եղծած ենք,

Թող Տէրը ըլլայ Ձեզի հետ, որպէսզի երբեք զԱյն ուրացողներ չըլլանք, այլ՝ հոգիով մեծ և ճշմարտութիւնն ու արդարութիւնը որպէս պատմուճան հագած, ըլլանք հարազատ որդիները մեր Մայր Եկեղեցիին»։

— Գիշերուան ժամը 7.30ին, Ս. Յակոբեանց Մայր Տաճարին մէջ, Գեր. Տեղապահ Ս. Հօր նախագահութեամբ սկսաւ Խաւարման կարգը, որ տևեց մինչև կէս գիշեր։ Քարոզեց Գեր. Տեղապահ Սրբազանը։ Խորհրդաւոր էր պահը երբ Տաճարը կը մթագնէր ու կը զգենուր սուգի խորհրդանիշը եղող սևը — խաւարը։

● Ուր. 3 Ապրիլ. — Աւագ Ուրբաթ: Առաւօտուն Ս. Յակոբեանց Մայր Տաճարին մէջ կատարուեցաւ Խաչելութեան կարգը, Գեր. Տ. Նորայր Եպս. Պողարեանի նախագահութեամբ։

— Կ. վ. Ս. Յակոբեանց Մայր Տաճարին մէջ կատարուեցաւ հանդիսաւոր Թաղման կարգը, Գեր. Տեղապահ Ս. Հօր նախագահութեամբ։ Աւագ Ուրբաթ երեկոյեան յոյժ սրտագրաւ Թաղման այս կարգը Ս. Յակոբեանց Մայր Տաճարին մէջ, կը կատարուի մեծվայելուչ հանդիսաւորութեամբ։ Յուզիչ է պահը երբ համայն Միաբանութիւնը Տիրոջ դագաղին առջև ծնկաչոք և գլխիբաց կ'երգէ «Սուրբ Աստուած»ը։

● Շբ. 4 Ապրիլ. — Աւագ Շաբաթ. Ճրագալոյց Ս. Զատկի: Կ. ա. ժամը 9ին, փոքր թափօր մը, գլխաւորութեամբ Աւագ Թարգման Հոգ. Տ. Հայրիկ Վրդ. Ասլանեանի, մեկնեցաւ Ս. Յարութեան Տաճար, կատարելու համար աւանդական բացումը Տաճարի դրան։

Ժամը 10.30ին, Տեղապահ Ս. Հօր գլխաւորութեամբ երկրորդ թափօր մը փութաց Ս. Յարութեան Տաճար ու մէկ անգամ Ս. Գերեզմանին շուրջ դառնալէ ետք ուղղուեցաւ դէպի Տաճարի մեր Տեաչարանը, ուր Տեղապահ Ս. Հայրը ընդունեց մեզի հետևակ Ղպտոց և Ասորւոց մեծաւորներուն շնորհաւորութիւնները։ Յունաց թափօրէն վերջ, Տեղապահ Սրբազանը բարձրացաւ Թ. Գողգոթայի վերնամատրան բարձրադիր պատըշգամը, մինչ մեր լուսահանը՝ Հոգ. Տ. Հայկազուն Վրդ. Աբրահամեան և Յունաց Պատր. Փոխանորդ Գեր. Տ. Աթենակորաս Արքեպս. զգեստաւորեալ մտան Փրկչական Ս. Գերեզման ու քիչ յետոյ, վառուած մոմի խուրձեր դուրս տրուեցան Ս. Գերեզմանի քովնտի բացուածքներէն ու լուսահիններու կողմէ փոխադրուեցաւ վերնատուն, Տեղապահ Ս. Հօր, որ իր բարձրադիր պատշգամէն օրհնեց վարը կրօնապէս ոգևորուած խուռներամ բազմութիւնը, Տաճարին հայկական և յունական բազմաթիւ զանգերուն ու կոչնակներուն բերկրալից ղօղանջներուն ընդմէջէն։ Հուսկ ապա սկսաւ օրուան երրազարդ թափօրը Քրիստոսի Ս. Գերեզմանին շուրջ, գլխաւորութեամբ Հոգ. Լուսահան Հօր, որ եպիսկոպոսական խոյր ի գլուխ կը նախագահէր բազմամարդ այս թափօրին, որուն կը հետևէին նաև Ղպտիք և Ասորիք։ Թափօրը յետ երիցս շրջման, կանգ առաւ Ս. Գերեզմանի ատեանին մէջ, ուր կարդացուեցաւ Յարութեան Աւետարան ու երգուեցաւ «Տէր ողորմեա», որմէ ետք, Ս. Գերեզմանին շուրջանակի թափօրով, մեր վերնամատրան մէջ վերջ գտաւ սոյն շքեղ հանդիսութիւնը։

Ժամը 2.30ին, Միաբանութիւն և ժողովուրդ շքերթով ճամբայ ելան դէպի Մայրավանք։ Կէս ճամբան, Դաւթի բերդին դիմաց, Տեղապահ Ս. Հայրն ու Լուսահանը կը զգեստաւորուին ու Տեղապահ Սրբազանը գաւազան կ'առնէ ի ձեռին, մինչ դպիրներ կը սկսին Յիսուսի Յարութեան շարականը «Քրիստոս Յարեաւ»ը թնդացնել։ Թափօրը յառաջացաւ դէպի Մայրավանք ու մուտք գործեց հարիւրաւոր վառուած կանթեղներով զարդարուն Մայր Տաճարը, ուր Գեր. Տեղապահ

digitised by A.R.A.R.@

Սրբազանի Ս. Աւետարանի ընթերցումը փակեց այս փառաշուք հանդէսը։

— Կէս ժամ ետք, Ս. Յակոբայ մեծ զանգը դարձեալ եկեղեցի կը հրաւիրէ հաւատացեալ ժողովուրդը։ Կը սկսի ճրագալոյցի արարողութիւնը ու կը մատուցուի իրիկնադէմի խորհրդաւոր Ս. Պատարագը, ժամարարն էր Հոգ. Տ. Միւռոն Վրդ. Կրճիկեան։ Յարութեան աւետիսին հետ կը բացուի Աւագ Խորանի գունագեղ վարագոյրը ու ի յայտ կուգայ խորանը իր ամենաշքեղ փառքին մէջ։ Բազմաթիւ հաւատացեալներ Հաղորդուեցան։ Յաւարտ Ս. Պատարագի, Գեր. Տ. Նորայր Եպս. Պօղարեանի նախագահութեամբ, կատարուեցաւ Ս. Զատկի Նախատօնը, յորմէհետէ Պատարագիչ Հայրն ու դպիրները զգեստաւորեալ և «Այսօր Յարեաւ» շարականի երգեցողութեամբ բարձրացան սեղանատուն, ուր յետ Աւետարանի ընթերցման կատարուեցաւ Ս. Զատկի աւանդական ճաշը։

● Կիր. 5 Ապրիլ. — Զատիկ Յարութեան Տեառն Մերոյ: Գիշերային ժամը 2ին, Գեր. Տ. Սուրէն Եպս. Քէմհաճեանի գլխաւորութեամբ, Միաբանութիւնը մեկնեցաւ Ս. Յարութեան Տաճար։ Ս. Գողգոթայի ուխտէն ետք, մեր վերնամատրան մէջ պաշտուեցաւ առաւօտեան ժամերգութիւնը մինչև «Հարց», երբ Միաբանութիւնը զգեստաւորեալ իջաւ Ս. Գերեզմանին ատեանը ու հոն արարողութիւնները ամբողջացնելէ ետք սկսաւ օրուան մեծահանդէս եռադարձ Թափօրը Ս. Գերեզմանին ու Պատանատեղւոյն շուրջ, գլխաւորութեամբ հանդիսապետ Ս. Հօր։ Մեր Թափօրին կը հետեւէին Ղպտոց և Ասորւոց Թափօրները։ Ս. Գերեզմանի դրան կարգէն ետք կատարուեցաւ «Անդաստան» ու կարճ դադարէ մը ետք, Քրիստոսի Ս. Գերեզմանին վրայ մատուցուեցաւ հանդիսաւոր Ս. Պատարագ, ի ներկայութեան ուխտաւորներու և հաւատացեալներու հոծ բազմութեան։ Ժամարարն էր Գեր. Տ. Նորայր Եպս. Պօղարեան։ Գերաշնորհ Սրբազանը «Հայր Մերէն առաջ» ժողովուրդի հոծ բազմութեան խօսեցաւ քարոզ մը, և Ս. Յարութեան հրաշափառ տօնին առիթով, ներկայ բազմաթիւ ուխտաւոր ժողովուրդին «Կենաց բանիւ» մխիթարեց, բնաբան ունենալով «Ահաւասիկ տեղին՝ ուր եդին զնա» (Մարկ. ԺԶ. 6), և ի միջի այլոց ըսաւ. — «Քրիստոսի Գերեզմանին յուզումով և երկիւղով մօտեցող կիներուն այսպէս կ'ըսէր հրեշտակը. բայց կիները իրենց յուզումին և երկիւղին մէջ չհասկցան այդ խօսքին իմաստը։ Անոնք գիտէին թէ Յիսուսը, հոս՝ այս Գերեզմանին մէջ դրած էին, բայց իրենց փնտռածը հոն չէր, ու իր տեղը կը մնար պարապ։ Իւղաբեր կանայք լսած էին ու գիտէին թէ Ան երեք օրէն ետք Յարութիւն պիտի առնէր։ Բայց որքան ալ գիտցած ըլլային, կարծես թէ պէտք պիտի ունենային աչքի ալ վկայութեան։ Իրենց տարակոյսը աւելցաւ և յուզումը սաստկացաւ մինչև որ Քրիստոս երևցաւ իրենց և ըսաւ թէ ըստ իր խոստման Յարութիւն առած է։ Այն ատեն իրենց տարակոյսը դարձաւ անխախտելի հաւատք։ Այն օրէն ասդին, բոլոր անոնք որոնք Քրիստոսի հրաշալի Յարութեան ականատես վկաները եղած էին, այս պարապ Գերեզմանը այնպիսի հաւատքով մը լեցուցին, որ ո՛չ հուր ու ո՛չ սուր և ո՛չ ալ անցնող դարերը կըրցան զայն խախտել։

«Քրիստոսի հաւատքը յաղթանակեց և տիրեց մահուան վրայ։ Անիկա եկած էր տիրելու հոգիներուն։ Քրիստոսի Յարութեան ճշմարտութիւնը այնքան զօրաւոր և էական էր հաւատքին համար որ Պօղոս առաքեալ կ'ըսէր թէ, «Եթէ Քրիստոս չիցէ յարուցեալ, ընդունայն է քարոզութիւնն մեր, ընդունայն են և հաւատքն ձեր»։ Այս Թափուր Գերեզմանն էր իսկական ներշնչարանը բոլոր առաքեալներուն։ Անոնք տեսած էին յարութեան փառքը, և հետագային ճշմարտութիւնը քարոզելու ատեն, վասն այդ ճշմարտութեան սիրով և վստահութեամբ յանձն կ'առնէին նահատակուիլ։

«Դուք, սիրելի և բարեպաշտ ուխտաւորներ, որ եկած էք հեռուներէն և մօտէն, այս քիչ մը նոյն այլ խորհրդաւոր վայրերուն մէջ պիտի տեսնէք քարերու պաղութեան մէջէն, հոգիին ջերմութիւնը։ Նոր Յոյս և Նոր Հաւատք ձեր փրկութեան համար։ Դուք որ մնաք և պիտի մտնէք այս Սուրբ Գերեզմանէն ներս, հոն պիտի գտնէք ձեր ուխտերուն լրումն ու ձեր հաւատքին պսակումը։ Այս Գերեզմանը խորհրդանշանն է անմահութեան և յաւիտենական կեանքին։ Մարդիկ աստենական կեանքէն վերջ կը տենչան ուրիշ կեանքի մ'ալ։ Հոգեկան այդ փափաքին գոհացում տուող վայրն է հոս։ Քրիստոս հանդիսացաւ օրինակ և տիպար, իբրև հաւաստիք մեզի թէ, մենք ալ մեր մահէն ետք պիտի միանանք իրեն։

«Յաւիտենական կեանքի հին և ընդհանուր հաւատքը մեզ բոլորս հաւաքած է այս Գերեզմանին շուրջ որ գրաւականն է և առհաւատչեան յաւիտենական կեանքի։

«Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցին, բարեպաշտ ժողովուրդ, այն խաղաղ տունն է որուն մէջ բնակելով է որ պիտի կարենանք հասնիլ յաւիտենական կեանքին։

«Թող Աստուած ընդունի ձեր բոլորին ուխտերը, կատարէ ձեր բոլոր խնդրանքները ու արժանի ընէ ձեզ յարութեան, որպէսզի հոն ալ կարենաք փառաւորել զանուն Ամենասուրբ Երրորդութեան որ է օրհնեալ յաւիտեանս յաւիտենից. Ամէն»։

— Նիւ Եորքի Առաջնորդարանի միջոցաւ Ամերիկաբնակ Ազն. Տիկին Շաքէ Ջիվիտեան Ս. Յարութեան տօնին առթիւ խնդրած է որ հոգեհանգստեան պաշտօն մատուցուի հանգուցեալ կեսարացի Գրիգոր Ջիվիտեանի հոգւոյն ի հանգիստ։

Ս. Պատարագի ընթացքին բազմաթիւ հաւատացեալներ ընդունեցին Ս. Հաղորդութիւն։ Յաւարտ Ս. Պատարագի, «Քրիստոս Յարեաւ» շարականի երգեցողութեամբ ու Ս. Գերեզմանին շուրջանակի Թափօրով, մեր Տեսչարանին մէջ փակուեցաւ 6 ժամ տևող Զատկական այս փառայեղ հանդիսութիւնը։ ժամը 8.30ին Միաբանութիւնն

digitised by A.R.A.R.@

ու ներկաներուն հոծ բազմութիւնը վերադարձան Մայրավանք։

— Կ. Վ. Զատկական մեծ «Անդաստան»ը կատարուեցաւ Մայրավանքի մեծ բակին մէջ, նախագահութեամբ Գեր. Տեղապահ Ս. Հօր։ Ապա, կատարելէ ետք՝ շրջանը մեծ բակին, թափօրը յառաջացաւ վանքի կամարակապ բաւիղներէն դէպի Տաճարին արտաքին գաւիթը, ուր կատարուեցաւ հոգեհանգիստ Հայ ազգի հին թէ նոր բոլոր ննջեցելոց հոգւոցն ի հանգիստ, յորմէհետէ թափօրը մուտք գործեց Մայր Տաճարը, ուր կատարուեցան երեկոյեան ժամերգութիւնն ու Նախատօնը։

● Բշ. 6 Ապրիլ. — Յիշատակ մեռելոց: Հանդիսաւոր Ս. Պատարագը, Ս. Յակոբեանց Մայր Տաճարի Աւագ Խորանին վրայ մատոյց և քարոզեց Գեր. Տեղապահ Ս. Հայրը։ Իրեն կը սպասարկէին Հոգ. Տ. Տ. Յակոբ Վրդ. և Վարուժան, Կիւրեղ և Օշական Աբեղաները։ Բազմաթիւ հաւատացեալներ Հաղորդուեցան։ Այսօր եւս, ինչպէս Զատկական այս հանդիսութեանց միւս բոլոր օրերուն եկեղեցին կը յորդէր հոծ բազմութեամբ, իսկ Մայր Տաճարին գունագեղ կանթեղներն ու վառուած ջահերը կ'աւելցնէին տօներուն վեհութիւնը։ Յաւարտ Ս. Պատարագի կատարուեցաւ երրադարձ մեծահանդէս թափօր, գլխաւորութեամբ Տեղապահ Ս. Հօր, որ զգեստաւորուած էր գանձատան ամենաչքեղ հանդերձներով, և ի ձեռին ունէր Ս. Խաչափայտի մասունքը, և մասնակցութեամբ բովանդակ Միաբանութեան, որոնցմէ Գեր. Եպիսկոպոսները ի ձեռին ունէին գաւազան, իսկ Հոգ. Վարդապետները սրբոց մասունքներ։ Ապա թափօրը կանգ առաւ մեծ ատեանին մէջ, ուր երգուեցաւ «Ճանապարհ»ը յատկապէս ուխտաւորաց համար ու «Տէր ողորմեա»։ Արարողութեանց աւարտին, Միաբանութիւն ու ժողովուրդ երգեցողութեամբ բարձրացան Պատրիարքարանի մեծ դահլիճը, ուր Գեր. Տեղապահ Սրբազանը փակեց տասը օրեր տեւող այս փառաշուք հանդիսութեանց շարքը ու բաժնեց ներկաներուն օրհնուած նշխարներ։

● Շբ. 11 Ապրիլ. — Գլխատումն Ս. Յովհաննու Կարապետին: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր։ Պատարագեց Հոգ. Տ. Զաւէն Աբեղայ Չինչինեան։

● Կիր. 12 Ապրիլ. — Նոր Կիրակի. (Յիշատակ Նահատակաց): Հանդիսաւոր Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Յակոբեանց Մայր Տաճարին մէջ։ Ժամարարն էր Հոգ. Տ. Հայկազուն Վրդ. Աբրահամեան։ Հոգ. Հայրը «Հայր մեր»էն առաջ խօսեցաւ քարոզ մը, բնաբան ունենալով Յայտնութեան Գրքէն «Երանի մեռելոց որք ի Տէր ննջեցին», անդրադառնալով մէկ միլիոն հայ նահատակներուն ողբերգական վախճանին, տալով նաև իր պատգամը նոր սերունդին։ Յետ Ս. Պատարագի կատարուեցաւ օրուան յատուկ հոգեհանգստեան կարգը, նախագահութեամբ Գեր. Տ. Սուրէն Եպս. Քէմհաճեանի. Նոյնը կրկնուեցաւ Երանաշնորհ Տ. Կիւրեղ Ս. Պատրիարքի շիրմին, ինչպէս նաև Հին Կրատան ու Զամ-Թաղի հոգադամբաններուն վրայ։

## ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ

● Եշ. 5 Մարտ. — Կ. ա. ժամը 11ին, Գեր. Տեղապահ Ս. Հայրը, ընկերակցութեամբ Հոգ. Տ. Հայրիկ Վրդ. Ասլանեանի և Տիար Կարպիս Հինդլեանի, այցելեց Քաղաքիս ոստիկանապետին։

— Կ. Վ. ժամը 3ին, Գեր. Տեղապահ Սրբազանը, ընկերակցութեամբ Գեր. Տ. Սերովբէ Վրդ. Մանուկեանի, անցաւ Նոր Երուսաղէմ և վերադարձաւ Կիր. 8 Մարտի առաւօտեան ժամը 9ին։

● Կիր. 8 Մարտ. — Կ. Վ. ժամը 3ին, Յոպպէի Տեսուչ Հոգ. Տ. Բաբգէն Վրդ. Ապտեան ժամանեց Ս. Աթոռ և վերադարձաւ Եշ. 12 Մարտ կէսօրէ վերջ ժամը 3ին։

● Կիր. 15 Մարտ. — Կ. Վ. ժամը 3.30ին, ի դիմաց Տեղապահ Սրբազան Հօր, Գեր. Տ. Սուրէն Եպս. Քէմհաճեան, ընկերակցութեամբ Հոգ. Տ. Անուշաւան Աբղ. Զղջանեանի և Տիար Կարպիս Հինդլեանի, ներկայ գտնուեցաւ Լատինաց Պատրիարքարանը գոհաբանական մաղթանքին և ընդունելութեան, Պիոս ԺԲ. Պապի գահակալութեան 14րդ տարեդարձին առթիւ։

● Բշ. 16 Մարտ. — Կ. Վ. ժամը 4ին, Գեր. Տեղապահ Սրբազանը, ընկերակցութեամբ Հոգ. Տ. Հայրիկ Վրդ. Ասլանեանի, այցելեց Ամմանի քաղաքապետ Վսեմ. Սըոգի Փաշայի, քաղաքիս Augusta Victoria հիւանդանոցին մէջ, իր հիւանդութեան առթիւ։

● Գշ. 24 Մարտ. — Առաւօտեան ժամը 10ին, Գեր. Տեղապահ Ս. Հայրը, վանական գործերով անցաւ Նոր Երուսաղէմ և վերադարձաւ նոյն օրը կէսօրէ վերջ ժամը 3ին։

— Կ. Վ. ժամը 3ին, Գեր. Տ. Սերովբէ Ծ. Վրդ. Մանուկեան, Հայրապետական Պատուիրակ Եւրոպայի, Գալանտիայի օդակայանէն մեկնեցաւ Պէյրութ, անկէ անցնելու համար Փարիզ՝ իր նոր պաշտօնատեղին։ Ողջերթի համար օդակայան գացած էին Հոգ. Տ. Տ. Հայկազուն և Հայրիկ Վարդապետներ և այլ հոգ. հայրեր։

— Կ. Վ. ժամը 4ին, ի դիմաց Տեղապահ Ս. Հօր, Գեր. Տ. Սուրէն Ս. Եպս. Քէմհաճեան, ընկերակցութեամբ Հոգ. Տ. Զաւէն Աբղ. Չինչինեանի և Տիար Կարպիս Հինդլեանի, ներկայ գտնուեցաւ ընդունելութեան մը American Colonyի մէջ, սարքուած տեղւոյս տնօրինուհի՝ Mrs. Vesterի ծննդեան 75ամեակին առթիւ։

● Դշ. 25 Մարտ. — Կ. Վ. ժամը 3ին, Գեր. Տ. Ռուբէն Ս. Արքեպս. Մանասեան Գալանտիայի օդակայանէն Պաղտատ մեկնեցաւ, Ս. Զատկուայ առթիւ արարողութեանց նախագահելու համար։

● Եշ. 26 Մարտ. — Կ. ա. ժամը 9.30ին, ի դիմաց Գեր. Տեղապահ Ս. Հօր, Հոգ. Տ. Անուշաւան Աբղ. Զղջանեան ներկայ գտնուեցաւ Ճերմակ Հայրերու Saint Etienne եկեղեցւոյն մէջ, Père Félix-Marie Abelի յուղարկաւորութեան։

● Շբ. 28 Մարտ. — Կ. ա. ժամը 10ին, Տեղապահ Ս. Հայրը, ընկերակցութեամբ Հոգ. Տ. Հայրիկ Վրդ. Ասլանեանի, ներկայ գտնուեցաւ Անգլիքաններու St. George եկեղեցւոյն մէջ, հո-

digitised by A.R.A.R.@

գեհանգստեան մասնաւոր պաշտաման, Անգլիոյ Ն. Վ. Queen Maryի հոգւոյն ի հանգիստ։

● Դշ. 1 Ապրիլ.— Կ. Վ. ժամը 3ին, Հոգ. Տ. Օշական Արք. Մինասեան Նոր Երուսաղէմ և Յոպպէ մեկնեցաւ, Զատկուայ տօթիւ անդ պատարագելու և հոգեւորապէս մխիթարելու տեղւոյն հայ գաղութը և վերադարձաւ Կիր. 5 Ապրիլ 1953, Կ. Վ. ժամը 3ին։

● Եշ. 6 Ապրիլ.—Առաւօտեան ժամը 10էն սկսեալ, Զատկուայ տօթիւ Պատրիարքարան այցելութեան եկան՝ Լատինաց Ս. Պատրիարքը իր հետեւորդներով, Ֆրանչիսկեանց Կիւսթոսը համբերձ Միաբանութեամբ, Յունաց Տեղապահը իր հետեւորդներով, Ղպտոց Եպս.ը, Ասորւոց մեծաւորը, Հապէշաց Եպս.ը, Անկլիքան Եպս.ը, Յոյն և Հայ Կաթոլիկներու և Մարոնիթներու փոխանորդները, Լուտերականներու մեծաւորը, քաղաքիս Վսեմ. Մութասարիֆը, Ոստիկանապետը սպայակոյտով, Քաղաքապետը փոխանորդով, Անգլիական և Ամերիկեան Հիւպատոսները և այլ ականաւոր անձինք։

Իսկ մեր կողմէ փոխադարձ այցելութեան գացին՝ Լատինաց Պատրիարքին, Ֆրանչիսկեանց Կիւսթոսին Յունաց Տեղապահին, Ղպտոց Եպիսկոպոսին, Ասորւոց փոխանորդին, Հապէշաց և Անգլիացւոց Եպիսկոպոսներուն, Յոյն և Հայ Կաթոլիկներու և Մարոնիթներու փոխանորդներուն, Լուտերականաց, և Անգլիական ու Ամերիկեան Հիւպատոսներուն։

● Գշ. 7 Ապրիլ.— Կ. Ա. ժամը 9ին, Յոպպէի Տեսուչ Հոգ. Տ. Բաբգէն Վրդ. Ապտեան վանական գործերով ժամանեց Ս. Աթոռ և վերադարձաւ Շբ. 11 Ապրիլ 1953, առաւօտեան ժամը 9ին։

● Եշ. 13 Ապրիլ.— Կ. Ա. ժամը 11ին, Ֆուատ Պէյ Սուլթան, քաղաքիս Նորընտիր Լիբանանեան Հիւպատոսը, իր առաջին այցելութիւնը տուաւ Տեղապահ Ս. Հօր։

## Ս. ՁԱՏԿԻ ՈՒԽՏԱՒՈՐՈՒԹԻՒՆԸ

Հակառակ շարունակուող քաղաքական անորոշ կացութեան, այս տարի ևս Երուսաղէմ ունեցաւ իր ուխտաւորութիւնը, շուրջ 250 հոգի, մեծ մասամբ Սուրիայէն, Լիբանանէն, Իրաքէն, Կ. Պոլսէն, ու մերձակայ երկիրներէն։

Թէ՛ բնակութեան և թէ՛ այլևայլ Սրբավայրեր այցելելու դիւրութիւնները տրուեցան իրենց լիովին։ Շուրջ երկու շաբթուայ ընթացքին, անոնք ո՛չ միայն ներկայ գտնուեցան մեր ամբողջ Զատկական արարողութեանց, ու այցելեցին Երուսաղէմի Տնօրինական Սրբավայրերը, այլև առիթը ունեցան այցելելու Բեթղեհէմ, Երիքով և Յորդանան Գետ, ուր պէտք եղած բացատրութիւնները տրուեցան իրենց։

Տօներէն ետք, անոնք սրտի խոր գոհունակութեամբ վերադարձան իրենց տեղերը, Ս. Քաղաքէն անջնջելի տպաւորութիւններ տանելով իրենց հետ։

## Ս. ԹԱՐԳՄԱՆՉԱՑ ՎԱՐԺԱՐԱՆԻ ՍԿԱՈՒՏՆԵՐՈՒ ԵՒ ԱՐԾՈՒԻԿՆԵՐՈՒ ԵՐԴՄԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆԸ

Կիր. 8 Մարտ 1953, իրիկուան ժամը 6.30ին, Ս. Թ. Վարժարանի սրահին մէջ, ի ներկայութեան ծնողներու և հրաւիրեալներու հոծ բազմութեան, տեղի ունեցաւ վարժարանիս Սկաուտական և Արծուիկային խումբերու երդման հանդիսաւոր արարողութիւնը, Նախագահութեամբ Գեր. Տեղապահ Ս. Հօր։

Հանդէսը բացաւ վարժարանիս բարեջան Տեսուչը՝ Հոգ. Տ. Կիւրեղ Արք. Գաբիկեան, իսկ արարողութեան աւարտին, Տեղապահ Սրբազանը տուաւ իր պատգամը երդուեալներուն ու «Պահպանիչ»ով օրհնեց զանոնք ու փակեց հանդէսը։

Գոյացած խանդավառութեան մէջ, փոքրիկ գումար մը հանգանակուեցաւ, ի նպաստ Ս. Թ. Վարժարանի Սկաուտական և Արենուշային խումբերուն։

## ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

Շնորհակալութեամբ ստացանք, մեր Ձեռագրաց Ցուցակի տպագրութեան ծախուց հաւռոյն, տարւոյս բարեպաշտ ուխտաւորներէն,

Տիար Լ. Ս. Ովանէսովէն Տ. Ց. 5
Օր. Ա. Աճեմեանէն — Սթ. 2

Տեսուչ Ձեռագրատան Ս. Յակոբեանց
ՆՈՐԱՅՐ ԵՊՍ.

تصدرها – بطريركية الارمن الارثوذكس مدير المطبعة – الآب زاوين شنشنيان تطبع في مطبعة دير الارمن – القدس
مارس – ابريل ١٩٥٣ العدد ٣ – ٤

Proprietor – His Beatitude the Armenian Patriarch of Jerusalem. Armenian Patriarchate, Jerusalem.
Editor – Father Zaven Chinchinian, Armenian Convent, Jerusalem.
Printed by the Armenian Convent Printing Press, Jerusalem.

digitised by A.R.A.R.@